Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N **23.6/[48321]-10**

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ 14-ԻՆ ԺԱՄԸ 18:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Խորհրդի անդամներ՝

Ա. Գևորգյան	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Ն. Երիցյան	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Տ. Դավթյան	ՀՀ ֆինանսների նախարար
Մ. Վարդանյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Գ. Դանիելյան	ՀՀ արդարադատության նախարար
Ե. Զախարյան	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ
Հ. Բեգլարյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի առաջին տեղակալ
Մ. Թումասյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Հրավիրվածներ՝

Վ. Խուրշուդյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր
Հ. Նաղդալյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր
Ա. Աղաջանյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր
Ա. Նռանյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր
Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Հ. Մկրտչյան	ՀՀ վարչապետի օգնական
Լ. Հունանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի տեղակալ

Ռ. Վարդանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ
Ռ. Եգանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ
Ֆ. Փիրումյան	«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպությունե ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն
Է. Ավետյան	ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական կառավարման կենտրոնե պետական հիմնարկի տնօրեն

1. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Երկրորդ փուլի Աշտարակ-Թալին ճանապարհի օտարվող հողի և գույքի ճշգրտման և գնահատման խորհրդատուի հետ պայմանագրի կնքման առաջարկության հաստատում

(Հ. Բեգլարյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հաստատել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Երկրորդ փուլի Աշտարակ-Թալին ճանապարհի օտարվող հողի և գույքի ճշգրտման և գնահատման խորհրդատուի հետ պայմանագրի («Մար-Մոսե ՍՊԸ-ի հետ կնքվելիք պայմանագիր՝ 25.0 մլն դրամ բանակցային արժեքով) կնքման առաջարկությունը.

2) հանձնարարել ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Մ. Վարդանյանին առաջիկա ՀՀ կառավարության նիստի քննարկմանը ներկայացնել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի հողի օտարման և տարաբնակեցման շրջանակը և դրա փոխհատուցման սկզբունքները հաստատելու մասինե և «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության վարչական սահմաններում գտնվող՝ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում առկա սեփականության օբյեկտների նկարագրության արձանագրության ձևերը հաստատելու մասինե ՀՀ կառավարության որոշման նախագծեր։

2. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Առաջին փուլի շինարարական աշխատանքների վերահսկողության և Երկրորդ փուլի ծրագրի նախապատրաստական աշխատանքների շրջանակներում խորհրդատվական ծառայությունների մրցույթի հաղթողի, և հաղթողի հետ բանակցող խմբի հաստատում

(Ֆ. Փիրումյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հաստատել ԱԶԲ-ի կողմից իրականացված ընտրության արդյունքները և հաղթող ճանաչել «Egis BCEOM International»ֆրանսիական ընկերությանը.

2) ստեղծել բանակցային խումբ՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի առաջին տեղակալ Հ. Բեգլարյանի գլխավորությամբ, ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Մ. Թումասյանի, ՀՀ Ամերիկյան համալսարանի ճարտարագիտական ֆակուլտետի դեկան Ա. Հաջյանի, «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպությունե ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ֆ. Փիրումյանի, Պայմանագրերի կառավարման բաժնի պետ Ա. Վարդանյանի և Ծրագրերի նախապատ-րաստման բաժնի պետ Ա. Կարախանյանի մասնակցությամբ:

3. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի Երևան-Աշտարակ 11,71կմ երկարությամբ (18+370-ից մինչև 30+080) ճանապարհային հատվածի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման մրցութային փաստաթղթերի հաստատում

(Ֆ. Փիրումյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հանձնարարել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպությունե ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Ֆ. Փիրումյանին՝

ա. ոչ ռեզիդենտ կազմակերպությունների համար նախագծային փաթեթի արժեքը սահմանել 200.0 ԱՄՆ-ի դոլար, իսկ ռեզիդենտ կազմակերպությունների համար՝ 70.0 հազ. դրամ,

բ. երաշխիքային ժամկետ սահմանել մեկ տարին,

գ. շինարարական կազմակերպության համար միջին տարեկան շրջանառություն ընդունել 20.0 մլն ԱՄՆ-ի դոլարը, ինչպես նաև ԱԶԲ-ի կողմից առաջարկված 6 տարվա ընթացքում առնվազն 3 պայմանագրի մասնակցության հաջողված փորձի (20.0 մլն ԱՄՆ-ի դոլար արժողությամբ) չափանիշները,

դ. ՁԼՄ-ներով ապահովել հանրությանը լուսաբանումը,

ե. համապատասխան մասնագետների հետ քննարկել ՀՀ էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանի առաջարկությունը (ասֆալտափռիչ սարքի տեխնիկական չափանիշների վերաբերյալ),

զ. ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար Դ. Սարգսյանի առաջարկությանը համապատասխան մասնագետների հետ քննարկել նոր կառուցվող ճանապարհների դեպքում հետագայում մալուխային գծերի ացկացման համար խողովակների տեղադրման հնարավորության հարցը.

2) հաստատել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի մասը կազմող Երևան-Աշտարակ 11,71 կմ երկարությամբ (18+370-ից մինչև 30+080) ճանապարհային հատվածի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման մրցութային փաստաթղթերը՝ հաշվի առնելով նիստում արված դիտողություններն ու առաջարկությունները:

4. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Երկրորդ փուլի Աշտարակ-Թալին և Երրորդ փուլի Թալին-Գյումրի ճանապարհի Անկախ մոնիթորինգի գործակալության Տեխնիկական առաջադրանքի հաստատում

(Ֆ. Փիրումյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հաստատել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Երկրորդ տրանշի Աշտարակ-Թալին և Երրորդ տրանշի Թալին-Գյումրի ճանապարհի Անկախ մոնիթորինգի գործակալության Տեխնիկական առաջադրանքը:

Լ Ր Ա Ց Ո Ւ Մ Ի Չ Հ Ա Ր Ց

5. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի բազմափուլ ֆինանսավորման գործիքի վերաբերյալ օգոստոսի 9-ին և սեպտեմբերի 1-ին կայացած վիդեոկոնֆերանսների ամփոփման արձանագրությունների մասին

(Ֆ. Փիրումյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ընդունել ի գիտություն «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպությունե ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Ֆ. Փիրումյանի՝ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի բազմափուլ ֆինան-սավորման գործիքի վերաբերյալ օգոստոսի 9-ին և սեպտեմբերի 1-ին կայացած վիդեո-կոնֆերանսների ամփոփման արձանագրությունների մասին հաղորդումը.

2) Խորհրդատվական ծառայությունների պայմանագիրը հաստատելու նպատակով Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի կառավարման խորհրդի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ կառավարության նիստի անցկացման օրը՝ 2010 թվականի սեպտեմբերի 24-ին, ժամը՝ 10:00-ին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ (ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ) ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՄՈՒՇԵՂ ԹՈՒՄԱՍՅԱՆ